Հաշվետվություն

Ս.թ. մարտի 26-ից 28-ը Քաթարի Պետություն (ք. Դոհա) Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության գլխավոր ասամբլեայի 23-րդ նստաշրջանին մասնակցության

1. **Անունը, ազգանունը.**

   Դավիթ Տոնոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Քաթարի Պետություն, քաղաք Դոհա, 2018թ. մարտի 26-ից 28-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության (ՔՊՄԿ, ICDO) գլխավոր քարտուղար Վլադիմիր Կուվշինովի հրավեր:

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն Քաթարի Պետության (ք. Դոհա) Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության գլխավոր ասամբլեայի 23-րդ նստաշրջանին:

6. **Քննարկված թեմաները.**

   Քննարկվել են հետևյալ թեմաները՝

   - Քաթարի հետ երկկողմ համագործակցության հնարավորության հարցերը քաղաքացիական պաշտպանության ոլորտում:
   - Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նոր ձևավորված արտակարգ իրավիճակների կառավարման նախարարության հետ նոր ձևաչափով համագործակցության հարցը:
   - ՀՀ ԱԻՆ-ի և Քաթարի ՆԳՆ-ի միջև փոխըմբռնման հուշագրի մշակման և կնքման հարցը:
   - Քուվեյթի Հրդեհային ծառայության հետ հնարավոր համագործակցության ակտիվացման և խթանման հարցերը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

- Քաթարի վարչապետ և ներքին գործերի նախարար Շեյխ Աբդուլահ բին Նասեր բին Խալիֆա ալ Թանիի հետ քննարկել ենք քաղաքացիական պաշտպանության ոլորտում հնարավոր երկկողմ համագործակցության ուղիներն ու հնարավորությունները: Կարևորել ենք համատեղ ուժերով Մերձավոր Արևելքի և Հարավային Կովկասի տարածաշրջաններում բնակչության դիմակայունության մակարդակի բարձրացման գործընթացը՝ աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված ակտիվ միջոցառումների իրականացումը:
- Հանդիպում եմ ունեցել նաև Քաթարի Պետության Հանրային անվտանգության տնօրեն և արտակարգ իրավիճակների մշտական կոմիտեի նախագահ գեներալ-մայոր Սաադ բին Ջասսիմ ալ-Խուալիֆիի հետ:
- Հանդիպել եմ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նոր ձևավորված արտակարգ իրավիճակների կառավարման նախարարության պատվիրակության անդամների հետ: Քննարկվել են երկողմ համագործակցության հարցերը նոր ձևավորված կառույցի շրջանակներում:
- Հանդիպել եմ Քուվեյթի Հրդեհային ծառայության ղեկավարի տեղակալի հետ, հանդիպման ժամանակ քննարկվել են երկկողմ հնարավոր համագործակցության հեռանկարները:

Ինչպես նաև մասնակցություն եմ ունեցել արտակարգ իրավիճակների արձագանքման վերաբերյալ Ռաս Լաֆֆան զորավարժարանում անցկացվող զորավարժություններին հետևյալ սցենարներով՝

- 7.5 մագնիտուտով երկրաշարժ,
- փլուզված և վնասված ենթակառույցներ,
- ինքնաթիռի վայրէջքի աղետալի իրավիճակին արձագանքում,
- զոհվածներ փլատակների տակ,
- քիմիական վտանգավոր նյութերի արձագանքում:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Պայմանավորվածություն է ձեռք բերվել մշակել փոխըմբռնման հուշագիր ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և Քաթարի Պետության Հանրային անվտանգության և արտակարգ իրավիճակների մշտական կոմիտեի միջև:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Նախատեսվում է հանդիպումներ ՀՀ-ում հավատարմագրված ՉԺՀ-ի, Քուվեյթի, ԱՄԷ-ի դեսպանների հետ՝ ձեռք բերված պայմանավորվածությունների հետագա ընթացքն ապահովելու համար:

10. **Գործուղվողը.**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյան:

11. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

29.03.2018թ.: